Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2022 թ. որոշմամբ
ա«ԻՄ ՔԱՅԼԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԻՄ ՔԱՅԼԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ԲՆԱԿԱՐԱՆ 5
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1022650
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-06-13
1.5 ՀՎՀՀ-ն		01282864
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60501444
		+(374)11408608
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.mystep.foundation
1.8 Էլեկտրոնային փոստը		info@mystep.foundation
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մխիթար Հայրապետյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	31	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Սոցիալական, մշակութային, կրթական, գիտական և առողջապահական ծրագրեր	200,409,986
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by
MARTIROSYAN
TIGRAN
2010740092
Date: 2022.11.25
16:50:47 AMT

	Սոցիալական, մշակութային, կրթական, գիտական և առողջապահական ծրագրեր	94,204,244
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Բժշկական սարք	500,000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Աջակցություն սոցիալական ծրագրի իրականացմանը	257,564,259	
Աջակցություն կրթական, գիտական ծրագրի իրականացմանը	247,159,126	
Աջակցություն առողջապահական ծրագրի իրականացմանը	146,823,067	
Աջակցություն մշակութային ծրագրի իրականացմանը	88,627,581	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	740,174,033	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	740,174,033	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Երևան 2022

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Հոգաբարձուների խորհրդի կազմ
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Զուտ ակտիվների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Հիմնադրամի գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գործադիր տնօրեն՝	Մխիթար Հայրապետյան

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը համաձայն՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀՄԷՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Հանգամանքի շեշտադրում – նախորդ տարիների ճշգրտում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ֆինանսական հաշվետվություններին կից 18 ծանոթագրությանը, որը նկարագրում է Հիմնադրամի կողմից նախորդ ժամանակահատվածի սխալների ուղղումը՝ կապված տրված կանխավճարի ոչ ճիշտ ժամանակահատվածում ծախսի ճանաչման և այդ գումարի չափով շնորհից եկամուտ ճանաչման վերաբերյալ: Մեր կարծիքով նշված ճշգրտումը տեղին է և ճիշտ է կիրառվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար
Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 հունիս, 2022թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Աննա Հակոբյան
Հոգաբարձուների խորհրդի նախագահ
ՀՀ վարչապետի տիկին

Լենա Նազարյան
Խորհրդի անդամ
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

Վահագն Թևոսյան
Խորհրդի անդամ
ՀՌՀ խորհրդի անդամ

Վահան Վարդապետյան
Խորհրդի անդամ
Բժիշկ, բժշկական գիտությունների թեկնածու

Լուսինե Կասսարջյան
Խորհրդի անդամ
FestivAr փառատոնների ասոցացիայի գործադիր տնօրեն

Արաքսի Սիմիդյան
Խորհրդի անդամ
ԱՄՆ «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, ֆինանսական պատասխանատու

Ժաննա Անդրեասյան
Խորհրդի անդամ
ԿԳՍՄ նախարարի տեղակալ

	Ծան	2021թ. Հազար դրամ	2020թ. Հազար դրամ Վերաներկայացված
Շնորհներից եկամուտ	5	768,561	2,107,341
Ծրագրային ծախսեր	6	(628,626)	(2,031,884)
Վարչական ծախսեր	7	(118,522)	(129,196)
Ֆինանսական եկամուտ		499	618
Ֆինանսական ծախս		(6,981)	(7,395)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/		(6,340)	61,134
Արդյունք մինչև հարկում		8,591	618
Շահութահարկի գծով ծախս		(90)	(111)
Տարվա զուտ արդյունք			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		8,501	507

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մխիթար Հայրապետյան
Գործադիր տնօրեն

Տիգրան Մարտիրոսյան
«Էվի ունիվերսալ» ՍՊԸ տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազար դրամ)

	Ծան.	31.12.2021թ	31.12.2020թ. Վերաներկայացված
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	160,193	170,276
Ոչ նյութական ակտիվներ		2,407	2,737
		162,600	173,012
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		366	1,785
Դեբիտորական պարտքեր		6,055	58,831
Դրամական միջոցներ	9	203,553	655,840
		209,974	716,456
Ընդամենը ակտիվներ		372,574	889,469
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	10	92,905	113,157
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	73,459	66,931
		166,364	180,089
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	10	11,059	11,290
Եկամուտներին վերաբերող շնորհներ	13	174,561	654,673
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		9,568	40,895
		195,188	706,858
Ընդամենը պարտավորություններ		361,552	886,946
Զուտ ակտիվ			
Կուտակված արդյունք		11,022	2,523

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

«ԻՄ ՔԱՅԼԸ» «МОЙ ШАГ» «MY STEP» 01282864

Մխիթար Հայրապետյան
Գործադիր տնօրեն

Տիգրան Մարտիրոսյան
«Էվի ունիվերսալ» ՍՊԸ տնօրեն

	Ծան.	2021թ. Հազար դրամ	2020թ. Հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մուտքեր դրամաշնորհներից ու նվիրատվություններից		294,614	2,671,303
Այլ մուտքեր		501	618
Նվիրատվությունների հատկացում		(9,518)	(1,044,904)
Վճարումներ ստացված ապրանքների և ծառայությունների դիմաց		(592,520)	(934,420)
Վճարումներ աշխատակիցներին		(76,207)	(133,590)
Այլ ելքեր		(32,474)	(12,747)
		(415,604)	**546,260**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված դրամաշնորհներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		-	13,263
Հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց վճարումներ		(2,877)	(13,263)
			-
Ֆինանսական գործունեությունից գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	11		
Վարկի ստացում (հիմնական միջոց ձեռքբերելու նպատակով)		-	-
Վարկի մայր գումարի մարում		(10,930)	(9,920)
Վարկի տոկոսի մարում		(6,981)	(7,395)
		(17,911)	**(17,315)**
Դրամական միջոցների զուտ հոսք		**(436,392)**	**528,945**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(15,895)	87,969
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը		655,840	38,926
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	9	**203,553**	**655,840**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մխիթար Հայրապետյան
Գործադիր տնօրեն

Տիգրան Մարտիրոսյան
«Էվի ունիվերսալ» ՍՊԸ տնօրեն

Զուտ ակտիվների մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կուտակված հավելուրդ Հազար դրամ	Ընդամենը զուտ ակտիվ Հազար դրամ
2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,521	2,521
Տարվա համապարփակ արդյունք	8,501	8,501
2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,022	11,022
2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,014	2,014
Տարվա համապարփակ արդյունք	507	507
2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,521	2,521

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից.

Մխիթար Հայրապետյան
Գործադիր տնօրեն

Տիգրան Մարտիրոսյան
«Էվի ունիվերսալ» ՍՊԸ տնօրեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ 12
2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 12
3 ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 13
4 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 14
5 ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ 17
6 ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ 18
7 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 18
8 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 19
9 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 20
10 ՎԱՐԿԵՐ 20
11 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄ .. 21
12 ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ 21
13 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ 21
14 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 22
15 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22
16 ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐ 23
17 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 23
18. ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՈՒՄ 24
19. ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 25

1 Հիմնադրամի մասին

“Իմ քայլը” բարեգործական հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2018թ.-ին: Հիմնադրամի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2018թ. հունիսի 13-ին, գրանցման համարը՝ 222.160.1022650.

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Տերյան 1/1: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01282864:

Հիմնադրամի նպատակն է ՀՀ-ում և սփյուռքում սոցիալական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումն է, նման ծրագրերի օժանդակությունը, այդ ոլորտներում բարեգործությունը:

Ծրագրերի մասին

Հիմնադրամի նախագծերի **սոցիալական** բաղադրիչը բաղկացած է.

- Արցախյան պատերազմի հետևանքով հումանիտար ճգնաժամից տուժած մարդկանց կարիքներին արձագանքելու նախագծեր,
- Ծրագրեր ուղղված հատկապես մարզերում Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված մարդասիրական ճգնաժամին արձագանքելուն:
- Սոցիալական օգնություն անապահով ընտանիքներին:

Հիմնադրամի **կրթական** բաղադրիչը բաղկացած է.

- Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող որոշակի ոլորտներում, ըստ մասնագիտության դասակարգված լավագույն 20 համալսարանների ուսանողների ֆինանսավորում:
- Դպրոցների և մանկապարտեզների վերակառուցում / վերանորոգում:

Հիմնադրամի **մշակութային** բաղադրիչը բաղկացած է.

- Համերգների և մշակութային միջոցառումների ֆինանսավորում,
- Մարզի մշակութային կենտրոնների (տների) վերանորոգման և մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման ֆինանսավորում:

Հիմնադրամի **առողջապահական** բաղադրիչը բաղկացած է.

- Աջակցություն Հայրենիքի Պաշտպանի վերականգնողական կենտրոնին,
- Անապահով ընտանիքների բժշկական օգնության ֆինանսավորում:

Նվիրատվությունը տրամադրվել է Զինծառայողների Ապահովագրական հիմնադրամին՝ խորհրդի որոշման հիման վրա:

2 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ-ներ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:
Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 17-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ամորտիզացված արժեքներով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Չկան նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ից, և որոնք ունեն էական ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Չկան դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ազդեցություն կունենան կամ հավանական է, որ ազդեն Հիմնադրամի ապագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են անընդհատության հիմունքով, ինչը ենթադրում է, որ Հիմնադրամի բոլոր ակտիվները կօգտագործվեն, և պարտավորությունները կմարվեն Հիմնադրամի գործունեության բնականոն ընթացքի ընթացքում, առանց տեսանելի ապագայում Հիմնադրամը դադարեցնելու կամ լուծարելու մտադրության:

Հիմնադրամի շարունակական գործունեություն վրա մեծապես ազդող գործոնի և այդ գործոնի հետ կապված Հիմնադրամի ղեկավարության գնահատականներն ու դատողությունները ներկայացված են ստորև:

Ստացված դրամաշնորհների և նվիրատվությունների կրճատում

Դրամաշնորհների և նվիրատվությունների հետ կապված դրամական միջոցների մուտքերը կրճատվել են 2021թ.-ին՝ 2020թ.-ի համեմատ: Կրճատումը պայմանավորված է երկու գործոնով.

- Կորոնավիրուսի համավարակ, որն հանգեցրել է մարդկանց եկամուտների մեջ ծախսերի և խնայողությունների համամասնությունների վերաբաշխման:
- Արցախյան պատերազմի հետևանքներ, որոնք նաև հանգեցրին երկրում քաղաքական անկայունության:

Անընդհատության վերաբերող գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամի ղեկավարությունը գնահատում է, որ այն կշարունակի իր գործունեությունը անընդհատության սկզբունքով:
Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Հիմնադրամի ֆինանսական դրությունը, ընթացիկ դրամական միջոցների մնացորդը, ընթացիկ պարտավորությունները և ֆինանսավորում հավաքագրելու կարողությունը նոր և առկա ծրագրերի իրականացման համար: Հիմնադրամը մտադիր է կազմակերպել դրամահավաքի նոր արշավ և զարգացնել նոր հարաբերություններ, որոնք թույլ կտան հանգանակություն և դրամաշնորհային մուտքեր ապահովել Հիմնադրամի գործունեության իրականացման համար:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի ասիճանակարգ»):
Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)
Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4 Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել, եթե սույն գրության մեջ այլ բան նշված չէ:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ,
- Վարկեր,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

	Ծան.	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
Ֆինանսական ակտիվներ		**2021թ.**	**2020թ.**
		Հազար դրամ	**Հազար դրամ**
Դրամական միջոցներ	9	203,553	655,840
		203,553	**655,840**

	Ծան.	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
Դրամական միջոցներ		**2021թ.**	**2020թ.**
		Հազար դրամ	**Հազար դրամ**
Վարկեր	10	103,964	124,447
Կրեդիտորական պարտքեր		2,833	30,618
		106,797	**155,065**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և կրեդիտորական պարտքեր:
Դրամական միջոցների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:
Իրական արժեքի աստիճանակարգի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի աստիճանակարգի 2-րդ մակարդակում ներկայացված են Ծան. 19-ում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Դրամական միջոցներ բանկում

Հիմնադրամը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի Հիմնադրամի կողմից դրամական միջոցները սպասարկող ՀՀ առևտրային բանկերը վստահելի են:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Հիմնադրամի գործարքներն արտահայտված են ՀՀ դրամից տարբեր արժույթով:

Հիմնադրամի արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով կամ այլ արտարժույթով բանկային մնացորդների, ինչպես նաև արտարժույթով արտահայտված ստացված վարկի գծով: Այս ռիսկն, ըստ էության, Հիմնադրամի կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

2021թ և 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝

	ԱՄՆ դոլար		Եվրո		Ընդամենը	
	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Դրամական միջոցներ	109,859	484,581	4,807	903	116,904	485,484
Վարկեր	(92,905)	(124,447)	-	-	(92,905)	(124,447)
Զուտ դիրքը	**16,954**	**360,134**	**4,807**	**903**	**23,999**	**361,037**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների՝ ՀՀ դրամով չափման համար Հիմնադրամը կիրառել է նույն ամսաթվին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքը՝ 480,14 դրամ (31.12.2020թ. դրությամբ՝ 522,59 դրամ):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ:
Այդ համատեքստում Հիմնադրամը նպատակ ունի բավարար կանխիկ գումար պահել իր պարտավորությունները կատարելու համար:

Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Վարկեր	4,197	12,677	16,883	33,807	62,072
Կրեդիտորական պարտքեր	2,833				
	7,064	12,677	16,883	33,807	62,072

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Վարկեր	4,564	13,793	18,366	36,775	85,956
Կրեդիտորական պարտքեր	30,618	-	-	-	-
	35,182	13,793	18,366	36,775	85,956

5 Շնորհից եկամուտ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ Վերաներկայացում
Եկամուտներին վերաբերող շնորհներից	761,387	2,097,381
Ակտիվներին վերաբերող շնորհներից	7,174	9,960
	768,561	2,107,341

6 Ծրագրային ծախսեր

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ Վերաներկայացում
Սոցիալական ծրագրեր	247,784	527,622
Գիտակրթական ծրագրեր	202,401	524,427
Նվիրատվություն Զինծառայողների Ապահովագրական հիմնադրամին	-	511,690
Մշակութային ծրագրեր	52,468	244,793
Առողջապահական ծրագրեր	114,097	198,923
«Հայաստանը առանց պլաստիկի» ծրագիր	-	15,240
Այլ	3,520	9,189
Դրամահավաքի կազմակերպման ծախսեր	8,356	-
	628,626	**2,031,884**

Ծրագրային ծախսերը ամբողջությամբ իրականացվում են ՀՀ տարածքում, բացառությամբ գիտակրթական ծրագրի շրջանակներում ուսանողների արտերկրի ուսումնական հաստատություններում ուսման վճարի փոխհատուցման:

7 Վարչական ծախսեր

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Աշխատավարձի գծով ծախսեր	86,722	79,338
Հիմնական միջոցների մաշվածություն	13,798	15,556
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,146	9,429
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,860	7,686
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	4,474	6,421
Բանկային ծախսեր	512	1,174
Այլ ծախսեր	6,009	9,592
	118,522	**129,196**

8 Հիմնական միջոցներ

	Շենքեր	Սարքավորումներ	Մեքենաներ	Գրասենյակա գույք
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրա
Սկզբնական արժեք				
1 հունվարի 2020թ.	**165,901**	**7,913**	**3,174**	**1,366**
Ավելացումներ	-	1,598	6,346	5,214
Դուրսգրումներ	-	(1,132)	(3,174)	-
31 դեկտեմբերի 2020թ.	**165,901**	**8,379**	**6,346**	**6,580**
Ավելացումներ				55
Դուրսգրումներ				(141)
31 դեկտեմբերի 2021թ.	**165,901**	**8,379**	**6,346**	**6,494**
Կուտակված մաշվածություն				
1 հունվարի 2020թ.	**1,228**	**2,638**	**377**	**27**
Մաշվածություն	8,268	4,731	1,137	1,039
Դուրսգրում	-	(739)	(774)	-
31 դեկտեմբերի 2020թ.	**9,496**	**6,630**	**740**	**1,066**
Մաշվածության ծախս	8,268	828	1,269	1,290
Ճշգրտում				(24)
31 դեկտեմբերի 2021թ.	**17,764**	**7,458**	**2,009**	**2,332**
Զուտ հաշվեկշռային արժեք				
1 հունվարի 2020թ.	**164,673**	**5,275**	**2,797**	**1,339**
31 դեկտեմբերի 2020թ.	**156,405**	**1,749**	**5,606**	**5,514**
31 դեկտեմբերի 2021թ.	**148,137**	**921**	**4,337**	**4,162**

2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ամբողջությամբ մաշված գույքի և սարքավորումների արժեքը կազմել է 6,843 հազար դր

2021թ. դեկտեմբերի 31-ին Հիմնադրամը ունի պարտավորությունների դիմաց գրավադրված ենթակա հիմնական մի
(2020թ-ին 155,177 հազար դրամ).

9 Դրամական միջոցներ

	31.12.2021 հազար դրամ	31.12.2020 հազար դրամ
Դրամական միջոցներ բանկերում ՀՀ դրամով	88,800	168,654
Դրամական միջոցներ բանկերում արտարժույթով	114,721	487,186
Կանխիկ միջոցներ դրամարկղում	32	-
	203,553	**655,840**

Հիմնադրամի միջոցները պահվում են վստահելի բանկերում, որոնց Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը շնորհել է Ba3 մակարդակի երկարաժամկետ պատասխանատու կողմի ռիսկ:

Դրամական միջոցներ բանկերում	31.12. 2021 AMD'000	31.12.2020 AMD'000
[Բանկ Ա]	119,459	14,323
[Բանկ Բ]	38,172	503,747
[Բանկ Գ]	30,557	123,434
[Բանկ Դ]	15,333	14,336
	203,521	**655,840**

10 Վարկեր

Հիմնադրամը Երևան քաղաքում գրասենյակային տարածք ձեռքբերելու նպատակով ՀՀ առևտրային բանկից 2019թ.-ին ստացել է վարկ՝ տարեկան 6% դրույքաչափով, ԱՄՆ դոլարով, տասը տարի ժամկետով: Վարկը ապահոված է նշված տարածքի գրավով:

Ֆինանսական հաստատու-թյուն	Գործարքի տեսակը	Արժույթ	Մարման ժամկետ	Տոկոս (%)	31.12.2021 հազար դրամ	31.12.2020 հազար դրամ
Բանկ 1	Հիպոթեքային վարկ	ԱՄՆ դոլար	2029	6	103,965	124,447

11 Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համահավասարեցում

	Փոխառություններ հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Մնացորդ 1 հունվարի 2021թ.	**124,447**	**124,447**
Վարկի ստացում	-	-
Տոկոսային ծախս	6,981	6,981
Մայր գումարի մարում	(10,930)	(10,930)
Տոկոսի մարում	(6,981)	(6,981)
Արտարժութային փոխարժեքից կորուստ	(9,552)	(9,552)
Մնացորդ 31 դեկտեմբերի 2021թ.	**103,965**	**103,965**
Մնացորդ 1 հունվարի 2020թ.	**123,994**	**123,994**
Վարկի ստացում		-
Տոկոսային ծախս	7,395	7,395
Մայր գումարի մարում	(9,920)	(9,920)
Տոկոսի մարում	(7,395)	(7,395)
Արտարժութային փոխարժեքից կորուստ	10,373	10,373
Մնացորդ 31 դեկտեմբերի 2020թ.	**124,447**	**124,447**

12 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2021 հազար դրամ	31.12.2020 հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	66,932	**55,242**
Ավելացումներ	13,701	21,650
Շնորհից եկամտի ճանաչում	(7,174)	(9,960)
Մնացորդը տարեվերջին	**73,459**	**66,932**

13 Եկամուտներին վերաբերող շնորհներ

	31.12.2021 հազար դրամ	31.12.2020 հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	654,673	**43,258**
Ստացված դրամաշնորհներ՝ դրամով	294,476	2,671,303
Ստացված դրամաշնորհներ՝ գույքով	500	37,493
Շնորհից եկամտի ճանաչում	(775,089)	(2,097,381)
Մնացորդը տարեվերջին	**174,561**	**654,673**

14 Կապակցված կողմերի գործարքներ

Կապված կողմերի գործարքները հետևյալն են.

Կապակցված կողմ	Գործարքի տեսակը	2021	2020
		հազար դրամ	հազար դրամ
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող հիմնադրամ*	Ստացված դրամաշնորհներ	147,727	1,887,125
		147,727	**1,887,125**

* Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող հիմնադրամը գտնվում է ԱՄՆ-ում: Այն միջոցներ է հավաքում ԱՄՆ-ից և փոխանցում է Հիմնադրամին:

Կառավարման հիմնական անձնակազմի փոխհատուցում

Հաշվետու ժամանակահատվածում հիմնական ղեկավար անձնակազմի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ աշխատավարձը և պարգևավճարները) կազմել է 15,187 հազար դրամ (2020թ.՝ 27,528 հազար դրամ):

15 Պայմանական պարտավորություններ

Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային, փոխարժեքային և մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Գնումների գծով պարտականություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի ընկերությունը չունի գնումների գծով պայմանական պարտավորություններ:

16 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ: Ռուսաստանին դիմագրավելու նպատակով, ԵՄ-ն, ԱՄՆ-ն և աշխարհի շատ երկրներ տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են հայտարարել և կիրառում, որի արդյունքում Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս պատերազմի ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի է:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ու ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն որ ՀՀ-ն ԵԱՏՄ կառույցի անդամ է, ստեղծված իրավիճակը անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Հաշվի առնելով նշված հանգամանքների և նրանց ազդացության անկանխատեսելիությունը, Հիմնադրամը այս պահին դժվարանում է գնահատել, վերջինիս ազդեցությունը Հիմնադրամի հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

17 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Դրամաշնորհներ

Հիմնադրամը որպես դրամաշնորհ է ճանաչում հիմնադիրներից, միջազգային և տեղական դոնորներից ստացված գումարները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով: Դրամաշնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում համակարգված հիմունքներով այն ժամանակահատվածների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախսեր է ճանաչում համապատասխան ծախսերը, որոնց համար դրամաշնորհները նախատեսում են փոխհատուցել:

Արտարժութային գործարքներ

Հիմնադրամի կողմից կնքված արտարժությանի գործարքները գրանցվում են գործարքների իրականացման ժամանակ գործող փոխարժեքով: Արտարժույթով դրամական ակտիվները և պարտավորությունները վերափոխվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով: Դրամական ակտիվների և պարտավորությունների վերափոխման արդյունքում ծագող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում: Կենտրոնական բանկի կողմից տարեվերջին հրապարակված արտարժույթի պաշտոնական փոխարժեքները հետևյալն են. ԱՄՆ դոլար 1.0 = 480,14 դրամ, Եվրո 1,0= 542,61 դրամ, ռուբլի 1.0 = 6,42 դրամ (2020 թ. ԱՄՆ դոլար 1.0 = 522,59դրամ, Եվրո 1,0= 641,11 դրամ, ռուբլի 1.0 = 7,02 դրամ):

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամը իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

Բանկերից և այլ փոխատուներից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:
Հետագայում նման տոկոսակիր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույքի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության պայմաններից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով:
Հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:
Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ ժամետները.

Հիմնական միջոցի անվանումը	Ժամկետը
Շենքեր	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Սարքավորումներ	1-8 տարի
Գրասենյակային գույք	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

18. Նախորդ տարվա սխալի ուղղում

Այս ֆինանսական հաշվետվություններում նախորդ տարվա համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվել է: Նախորդ տարվա վերջով կանխավճար տրամադրված գումարը, որի գծով ծառայությունը ստացվել է 2021թ ընթացքում ծախս էր ճանաչվել 2020թ-ին, ինչպես այդ գումարի չափով ճանաչվել էր շնորհներից եկամուտ:

Սխալի ուղղման ազդեցությունը 2021թ.-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա ներկայացված է ներքո.

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

	2020 Նախկինում ներկայացված	Ճշգրտում, աճ/ (նվազում)	2020 Վերաներ-կայացված
Շնորհներից եկամուտ	2,159,341.0	(52,000)	(2,107,341)
Ծրագրային ծախսեր	(2,083,884)	(52,000)	(2,031,884)

Ֆինանսական վիճակի մասինհաշվետվություն

	2020 Նախկինում ներկայացված	Ճշգրտում, աճ/ (նվազում)	2020 Վերաներ-կայացված
Դեբիտորական պարտքեր	6,831.0	52,000.0	58,831.0
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	602,673.0	52,000.0	654,673.0

19. ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Կրեդիտորական պարտքեր	2,833	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտենում է դրանց իրական արժեքներին:	Մակարդակ 3	ոչ կիրառելի
Վարկեր	103,965	*Ընթացիկ* Վարկերի իրական արժեքը գնահատվում է զեղչելով ապագա դրամական միջոցների պայմանագրային հոսքերը ընթացիկ շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	6% զեղչի դրույք

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.11.2022 16:38